



Բյուջեներ քաղաքացիների համար

Բյուջետային գործընթացներին մասնակցության ուղեցույց ՔՀԿ-ների համար

ԵՄ-ի և Չեխիայի Հանրապետության փորձի ներկայացում

Պատրաստեց Յանա Ստեհնովան

Պրահա, 2023

Եվրոպական միության ֆինանսավորմամբ գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկերներ՝ «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցությամբ: Ծրագրի հիմնական նպատակն է քաղաքացիական հասարակության մասնակցությամբ խթանել Հայաստանում ներառական և թափանցիկ բյուջետային գործընթացին և նպաստել պետական բյուջետային գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության ուժեղացմանը:

«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995 թվականին՝ նպատակ ունենալով նպաստել հզոր քաղաքացիական հասարակություն ձևավորմանը. և աջակցել Հայաստանի՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության զարգացմանը: Կազմակերպությունը նպաստել է Հայաստանի հանրային քաղաքականությունների մշակմանը, կոռուպցիայի դեմ պայքարի, գողացված ակտիվների վերադարձի, մարդու իրավունքների և գենդերային հավասարության, բյուջետային գործընթացների, լավ/բարի կառավարման և օրենքի գերակայության ոլորտներում:

«Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ն Չեխիայում գործում է գրեթե տասնհինգ տարի: Այն ստեղծվել է որպես չեխական ոչ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ երկու հոլանդացի գործընկերների կողմից. հանրային գործընթացներում բաց երկխոսության և քաղաքացիների ներգրավվածության ավանդույթը իր ուրույն տեղն ունի Նիդերլանդներում: «Ագորայի» առաքելությունը մեր հասարակության ժողովրդավարացման գործընթացի ամրապնդումն է: Կազմակերպության երկարաժամկետ հանձնառությունը քաղաքացիների և համայնքապետարանների միջև հաղորդակցության ու համագործակցության բարելավումն է և հանրային գործընթացներով հետաքրքրված քաղաքացիների խրախուսումը՝ երկրում քաղաքական մշակույթը բարելավելու նպատակով:

Սույն ուղեցույցը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի շրջանակներում: Ուղեցույցի բովանդակության համար պատասխանատու է բացառապես հեղինակը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետը:

Բյուջետային գործընթացներին մասնակցության ուղեցույցը պատրաստել է Յանա Ստեհնովան «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի համար:

Էլ.փոստ՝ stehnovaj@gmail.com

© «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ 2023

Չեխիայի Հանրապետություն, 140 00 Պրահա 4, Պետրա Ռեզկա 12 Էլ.փոստ՝ info@agorace.cz

Կայք՝ <https://www.agorace.cz/>

Բովանդակություն

Բովանդակություն	2
Հապավումներ	3
Նախաբան	4
Ներածություն	8
ՔԱՅԼ 1: Իմացեք Ձեր բյուջեն(երը)	11
ՔԱՅԼ 2: Հետևեք ժամանակացույցին	13
ՔԱՅԼ 3: Սշտադիտարկեք և վերլուծեք.....	21
ՔԱՅԼ 4: Բարձրացրեք իրազեկվածությունը.....	24
ՔԱՅԼ 5: Դարձեք միջնորդ	28

Հապավումներ

ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա (ՀԿ)
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԲ	Մասնակցային բյուջետավորում
ՄԲԳ	Միջազգային բյուջետային գործընկերություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն (Հայաստան)
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ՖՏ	Ֆիսկալ տարի (ֆինանսական տարի կամ բյուջետային տարի)

Նախաբան

Բյուջետային ոլորտում թափանցիկությունն ու հաշվետվողականությունը խթանելու նպատակով իրականացվող շարունակական շահերի պաշտպանության գործընթացի, ինչպես նաև միջազգային հանրության կողմից ներկայացվող առաջարկների համատեքստում Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) ստանձնել է ուժեղացնել հարկաբյուջետային թափանցիկությունը և մեծացնել քաղաքացիների մասնակցությունը իր բյուջետային գործընթացում:¹ Պետական բյուջեի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը այս գործընթացում էական նախապայմանն է, սակայն երկարաժամկետ հեռանկարում այն ընդամենը առաջին քայլն է: Բյուջեի և հարկաբյուջետային թափանցիկության օրակարգի խթանումը բավականին նոր գործընթաց է երկրում և, հետևաբար, մարտահրավեր է ինչպես պետական մարմինների, այնպես էլ լայն հասարակության, ներառյալ՝ ոչ առևտրային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների համար:

Ընդհանուր առմամբ, հարկաբյուջետային քաղաքականության մեջ ներգրավվելու երկու եղանակ կա.

- (i) **Հրավիրված մասնակցություն**, երբ պետական մարմինները հրավիրում են քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ունենալ մասնակցություն, :
- (ii) **Պահանջված մասնակցություն**, երբ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն են նախաձեռնում մասնակցություն և դիմում պետական մարմիններին:²

Այս հրապարակման շրջանակներում մեր ուշադրության կենտրոնում է վերջինը, մասնավորապես՝ ներկայացվելու է ԵՄ-ի և հատկապես Չեխիայի փորձը այն մասին, թե ինչպես կարող է քաղաքացիական հասարակությունը մասնակցել հարկաբյուջետային քաղաքականության քննարկումներին և բանավճճերին

Սույն ուղեցույցը մշակվել է «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրի (Ծրագիր) շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Ծրագիրը իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» (ԻՀԱ) հասարակական կազմակերպության (ՀԿ) (ղեկավար կազմակերպություն), «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏՁՀԿ) ՀԿ-ի և չեխական «Ագորա Սենթրլ Յուրովի» ՀԿ-ի կողմից:

Ելնելով ծրագրի նպատակներից, ուղեցույցը մշակվել է Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) բյուջետային կարողությունները բարձրացնելու նպատակով:

¹<https://www.opengovpartnership.org/members/armenia/commitments/AM0029/>,

<https://www.opengovpartnership.org/members/armenia/>

²<https://fiscaltransparency.net/public-participation-principles-and-guide/>

Ուղեցույցի համար հիմք է հանդիսացել ԻՀԱ-ի կողմից իրականացված ելակետային ուսումնասիրությունը, որը օգտակար տեղեկատվություն է տրամադրում իրազեկվածության, կարիքների և կարողությունների ներկա վիճակի վերաբերյալ, ինչպես նաև ուրվագծում է բյուջետային գործընթացում ներգրավվելու նպատակ ունեցող հայաստանյան ՔՀԿ-ների շրջանում առկա բացերն ու խնդիրները: Ելակետային ուսումնասիրությունը պարզել է, որ հարցված 81 (ութսուն մեկ) կազմակերպություններից միայն 20%-ն է վերջին տարիների ընթացքում իրականացրել բյուջեի կատարողականի մոնիտորինգ, 13.8%-ը ընդհանրապես չեն օգտվել պետական բյուջեի տեղեկատվությունից, իսկ ՔՀԿ-ների 43.8%-ը օգտվել են տարին միայն մեկ կամ երկու անգամ: Բյուջեի տեղեկատվությանը հասանելի է եղել որոշ պարբերականությամբ, ընդ որում, նրանցից շատերին հասանելի են միայն տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) բյուջետային տեղեկատվությունը (այլ ոչ թե պետական մարմինների): Հաստատվել է, որ բյուջեն վերլուծելու, մշտադիտարկելու և շահերի պաշտպանության իրականացման հմտությունների զարգացման կարիք կա: ՔՀԿ ներկայացուցիչները ոչ բավարար մակարդակով են տեղյակ տվյալների աղբյուրներին, բյուջետային գործընթացի կոնկրետ ոլորտները և ուղղությունները մշտադիտարկելու հնարավորություններին:

Վերջերս տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ Հայաստանում պետական բյուջեի առանձին մասերի (այդ թվում՝ տարածքային ինքնակառավարման) նախագծերը մշակող պետական մարմիններին հանձնարարվել է նախքան իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (ՄԺԾԾ) վերջնական նախագիծը մշակելը և ներկայացնելը, քննարկումներ անցկացնել շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:³ Առանց բյուջետային հիմնախնդիրների վերաբերյալ խորը գիտելիքների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները դժվար թե կարողանան մասնակցել բովանդակալից և կառուցողական քննարկումների:

Այս փաստաթուղթը սահմանում է հինգ քայլից բաղկացած մոտեցում, որը կօգնի ՔՀԿ-ներին և սոցիալական այլ խմբերին՝ կատարել բյուջեի վերաբերյալ ուսումնասիրություններ և դրանք կիրառել աշխատանքի ընթացքում: Այս «քայլերը» կազմում են **ուղեցույցի** առանձին բաժիններ՝ տրամադրելով որոշ ուղենիշներ և գաղափարներ այն մասին, թե որտեղից և ինչպես սկսել, նույնիսկ առանց բյուջեի հետ կապված խնդիրների մասին նախնական (կամ ոչ բավարար) գիտելիքներ ունենալու: Պարտադիր չէ քայլ առ քայլ հետևել, քանի որ բյուջետային աշխատանքը բավական բարդ է, և շարունակական ու բազմակողմանի մոտեցում է պահանջում, այնուամենայնիվ, դրանք կարող են ՔՀԿ-ներին օգնել՝ մշակել իրենց «ճանապարհային քարտեզը»:

Սկզբնական ժամանակահատվածում գործունեության ոլորտներ ընտրելիս՝ բյուջետային գործընթացներն ու բյուջետային համակարգը, որպես կանոն, առաջնահերթություններից դուրս է: Սա հիմնականում պայմանավորված է տեխնիկական բնույթի էական հմտությունների պակասով և, ընդհանուր առմամբ, ոչ գրավիչ լինելու հանգամանքով: Այնուամենայնիվ, շատ դեպքերում սա կարող է օգտակար լինել այն տեսանկյունից, որ բյուջետային համակարգի ուսումնասիրությունն ու

1 ԻՄԱՑՆՔ ՁԵՐ ԲՅՈՒՋԵՆ

³ Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 35-Ս որոշում:

վերլուծությունը կարևոր է կազմակերպության սեփական փորձի ձևավորման համար: Ի լրումն, եթե պետական կամ տեղական բյուջեի գործընթացը չի ապահովում տեղեկատվության հասանելիություն, ապա այս դեպքում բյուջետային գործընթացի իրականացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումը (օրինակ՝ տեղեկատվության հասանելիության ապահովումը) կարող է լինել սկզբնական պահանջը:

Տարվա կտրվածքով բյուջետային գործընթացում մասնակցությունը պետք է ապահովել պարբերաբար՝ տարեկան պարբերաշրջանին (ցիկլին) համապատասխան: Այստեղ պետք է ընդգծել, որ բյուջեի հետազոտության արդիականությունը ունի երկու բաղադրիչ: Առաջին. ժամանակին պատկերացնել՝ հետազոտության կատարման հնարավորությունները, երկրորդ՝ հետազոտության արդյունքները հրապարակել ճիշտ ժամանակին, որը ենթադրում է այնպիսի ժամանակահատված, երբ արդյունքները կարող են ունենալ ազդեցություն որոշում կայացնողների վրա: Կազմակերպությունը պետք է կարողանա պարբերաբար հետևել քաղաքականության գործընթացին, և անհրաժեշտության դեպքում, միջոցներ հատկացնել որոշակի խնդրի լուծման համար:⁴

ՔՀԿ-ները պետք է ապահովեն, որ իրենց կողմից իրականացված բյուջեի վերլուծությունը հիմնավորված լինի, հատկապես կազմակերպության նկատմամբ երկարաժամկետ վստահություն ձևավորելու համար: Քաղաքականություն մշակողները և լրատվամիջոցներն էական նշանակություն կտան կազմակերպության աշխատանքին, եթե վստահ լինեն, որ այն ճշգրիտ է և վստահելի: Չպետք է բացառել այն հանգամանքը, որ ՀԿ-ի կողմից մշակված զեկույցը, որն ունի նաև լրատվական բնույթի բովանդակություն, կարժանանա զանգվածային լրատվության միջոցների (ՁԼՄ-ներ) ուշադրությանը նույնիսկ այն դեպքում, եթե դրա հիմքում ընկած աշխատանքը թերի փաստարկված է, սակայն ժամանակի ընթացքում այդ ՀԿ-ի կողմից կատարված աշխատանքները չեն արժանանա ուշադրության՝ կազմակերպության մշակված զեկույցներում թերություններ հայտնաբերելու պատճառով:⁵

Ոչ պակաս կարևոր է հետազոտության մատչելիությունը: Թիրախային լսարանը հիմնականում չի տիրապետում վերլուծվող քաղաքականության խնդրի մանրամասներին: Ուստի կարևոր է, որ հետազոտությունը պատրաստվի թիրախային լսարանի կարիքների հաշվառմամբ: Սա ենթադրում է հետազոտության արդյունքների վերաբրեյալ զեկույցների

2 ՀԵՏԵՎԵՔ ՕՐԱՅՈՒՅՑԻՆ

3 ՎԵՐԱՀՄՎԵՔ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԵՔ

4 ԲԱՐՁՐԱՅՐԵՔ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅ ՈՒՆԸ

⁴ <https://internationalbudget.org/publications/budget-advocacy-skills-tools-and-tactics/>

⁵ <https://internationalbudget.org/publications/budget-advocacy-skills-tools-and-tactics/>

մշակում պարզ և հանրամատչելի լեզվով, հնարավորինս շրջանցելով խիստ մասնագիտական եզրույթները: Նաև պետք է ձեռնպահ մնալ կենցաղային կամ ժարգոնային լեզվի օգտագործումից: Տեղեկատվության և տվյալների ներկայացումը պետք է ունենա հստակ կառուցվածք, օգտակար ձևաչափ և բացատրական գրաֆիկներ:⁶

Ամբողջ աշխարհում ՔՀԿ-ները հանրային ոլորտում ձայնի իրավունք են ձեռք բերել հանրային քաղաքականությունները, բյուջեները և ծառայությունների մատուցման շրջանակը վերլուծելով: Վերլուծության արդյունքները որոշումներ կայացնողներին և շահագրգիռ կողմերին են տրամադրվում՝ ուղիղ կամ լրատվամիջոցների միջոցով, որը, որպես կանոն, ունի երկու նպատակ. ազդել որոշումների կայացման վրա, և զարգացնել կարողությունները հանրային քաղաքականության այլ ոլորտներում ներգրավվելու համար: Հանրային քաղաքականության և ծառայությունների առավելությունները ներառում են մասնագիտական հանրային քննարկումների ուժեղացում և քաղաքականության մշակման և իրականացման գործընթացի հաշվետվողականության բարելավում: Նման աշխատանքը կարող է խթան հանդիսանալ հանրային մասնակցության և հավաքական գործողությունների համար:⁷

Այս ուղեցույցը մշակելիս օգտագործվել են մի շարք նյութեր: Նկատի ունենալով բյուջետային գործընթացում Միջազգային բյուջետային գործընկերության (ՄԲԳ) մեծ փորձը, սույն աշխատության հիմնական ռեսուրս օգտագործվել են նաև նրանց կողմից մշակված ուղեցույցները: Բացի ՄԲԳ-ի օգտակար ռեսուրսներից, օգտագործվել են նաև քաղաքականություններին վերաբերող ամփոփագրեր, զեկույցներ, ձեռնարկներ, ակադեմիական և հետազոտական աշխատանքներ ու հավաքածուներ: Այդ հրապարակումների ոչ սպառիչ ցանկը կարող է օգտակար լինել նաև Ձեզ՝ հետագա ուսումնասիրությունների և բյուջետային ոլորտում գործունեության համար: Յանկը հասանելի է սույն հրապարակման վերջում՝ «Ռեսուրսներ» բաժնում:

5 ԴԱՐՁԵՔ
ՄԻՋՆՈՐԴ

⁶ <https://internationalbudget.org/publications/budget-advocacy-skills-tools-and-tactics/>

⁷ <https://knowledge-uclga.org/IMG/pdf/participatorybudgetingwb.pdf>

Ներածություն

Քաղաքացիական հասարակության կառուցողական մասնակցությունը կարող է բարձրացնել բյուջեի քննարկումների որակը և բարելավել բյուջետային գործընթացի արդյունքները տարբեր եղանակներով, օրինակ՝ ուսուցումներով (որին մասնակցում են այլ ԲՀԿ-ներ, լրագրողներ և նույնիսկ օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ), տեղեկատվության և ոլորտային քաղաքականության խնդիրները լուսաբանելով (հատկապես՝ աղքատ, խոցելի կամ այլ անապահով խմբերի կարիքները բյուջետային որոշումների կայացման գործընթացում ներառելով), լավագույն փորձի ներկայացմամբ (արտաքին տիրույթում իրենց տեսակետի շնորհիվ) և հաշվետվողականություն ապահովելու պահանջով:

Հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում հասարակության մասնակցությունը իրականացվում է տարբեր միջոցներով. դեմ առ դեմ հաղորդակցություն, քննարկումների ներգրավվածություն, որոշումների կայացման գործընթացում մասնակցություն: Կան նաև հաղորդակցության գրավոր ձևեր՝ առցանց, կամ այլ մեխանիզմներով: Հանրության մասնակցությունը կարող է լինել պաշտոնական կամ ոչ պաշտոնական, ներառելով, բայց չսահմանափակվելով մեկանգամյա հանրային խորհրդակցությանը մասնակցելու հրավերից մինչև բյուջետային հայտերի վերաբերյալ կարծիքների ներկայացում, կարող է ունենալ ընթացիկ և ինստիտուցիոնալ հարաբերություններ, օրինակ՝ հանրային հարցումների պարբերաբար իրականացում, մշտական խորհրդատվական մարմինների ստեղծում և գործարկում: Այն կարող է ներառել նաև պոտենցիալ մասնակցային բյուջետավորում, որը ենթադրում է, որ քաղաքացիներն իրականում քվեարկում և որոշում են, թե ինչպես է ծախսվելու բյուջեի այս կամ այն տողը:

Ընդհանուր առմամբ, քաղաքացիական հասարակության խմբերը կարող են անհասկանալի և շփոթեցնող թվացող բյուջեն ավելի մատչելի և ընկալելի դարձնել շահագրգիռ կողմերի լայն շրջանակի համար՝ օրենսդիր մարմնից մինչև շահագրգիռ խմբեր: Բյուջետային ոլորտում կատարված աշխատանքը կարող է օգնել պարզեցնել (դարձնել հեշտ ընկալելի) բյուջեն այս շահագրգիռ կողմերի համար, նրանց ներգրավել այնպիսի բանավեճերին, որոնք

Հանրության մասնակցությունը հարկաբյուջետային քաղաքականությանը.

Քաղաքացիական

հասարակության, բիզնեսի և այլ ոչ պետական դերակատարների կողմից գործադիր իշխանության հետ հարկաբյուջետային հարցերի շուրջ անմիջականորեն համագործակցելու եղանակները կարող են ներառել, օրինակ՝ պետական հարկերի վճարումը և եկամուտների հավաքագրումը, միջոցների բաշխումը, փաստացի ծախսերը և կատարողականը, աուդիտը և հանրային ակտիվների և պարտավորությունների կառավարումը: Աղբյուր՝ GIFT – Great Investment for Tomorrow):

ԲՅՈՒՋԵՆ ԸՆԿԱԼԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ ԽՈՐՎԱԹԻՍՅՈՒՄ

2000 թվականին Խորվաթիայի հանրային ֆինանսների ինստիտուտը հրատարակեց ձեռնարկ՝ պետական բյուջեների համակարգի ընդհանուր ներկայացմամբ՝ որը վերլուծում էր ազգային և տեղական բյուջեների հիմնարար ասպեկտները (ներառյալ եկամուտները, ծախսերը, արտաբյուջետային միջոցները և ընդհանուր կառավարման համախմբված բյուջեն), բյուջետային գործընթացի տարբեր փուլերի նկարագրությունը: Հրապարակված լինելով այն ժամանակ, երբ գործադիրի բյուջեի առաջարկը պետք է քննարկվեր խորհրդարանում, ուղեցույցը լայնորեն կիրառվել էր ոչ միայն լրատվամիջոցների, այլ նաև քաղաքական գործիչների կողմից: Պատգամավորներից մեկը վկայակոչելով փաստաթուղթը, դիմելով ֆինանսների փոխնախարարին՝ ասաց. «Մենք այլևս կարիք չունենք ձեզ լսելու, մենք ունենք ուղեցույց:» (Աղբյուր, ՄԲԳ, էջ.38)

վերաբերում են ռեսուրսների բաշխմանը, ներառյալ՝ այս խմբերի համար ամենաօրինակալ կարիքները բավարարելուն:

Հանրային ֆինանսները երեք հիմնական գործառույթ ունեն՝ բաշխում, վերաբաշխում և կայունացում: Դրանք ծառայում են պետության և նրա ինստիտուտների գործունեության ֆինանսավորմանը, հնարավորություն են ընձեռում մեղմելու հասարակության տարբեր շերտերում առկա աղքատությունն ու անհավասարությունը և նպաստում են տնտեսական ակտիվության տատանումների նվազեցմանը: **Հանրային ֆինանսների կառավարման հիմնական գործիքը պետական բյուջեն է:**

Հանրային բյուջեներ՝ պետական հատվածի մաս կազմող հաստատությունների բյուջեներ: Բյուջեներն օգտագործվում են դրանք նախագծող և իրականացնող հաստատությունների կառավարումը պլանավորելու, իրականացնելու և վերահսկելու համար: Պետական հատվածի հաստատությունների բյուջեները հաճախ ներառում են եկամտի, ծախսերի և մնացորդի մասին տեղեկություն որոշակի ժամանակահատվածի համար, որը սովորաբար (օրացուցային) տարի է և կոչվում է նաև ֆիսկալ տարի:

Քանի որ հանրային ֆինանսները (և, հետևաբար, պետական բյուջեները) ունեն տարբեր գործառույթներ, ուստի, ՔՀԿ-ների կողմից բյուջետային ոլորտում աշխատանքը կարող է հետապնդել տարբեր նպատակներ: **Բյուջետային ոլորտի աշխատանքների վերաբերյալ մոտեցումները ևս կարող են տարբեր լինել առանձին ՔՀԿ-ների մոտ: Ավելին, նրանց գործունեության ոլորտային թիրախը և վերլուծության առարկան նույնպես կարող է տարբերվել:** Օրինակ՝ որոշ կազմակերպություններ կարող են նախընտրել ուսումնասիրել մակրոտնտեսական պատկերը (օրինակ՝ պարզել, թե որքան է ծախսում պետությունը, որն է բյուջեի դեֆիցիտը, դրա պատճառը և ինչպես է այն առաջարկվում ֆինանսավորել, ինչպես են հավաքագրվում ռեսուրսները, օրինակ՝ «հարկային արդարադատության» օրակարգի մասով): Կազմակերպությունների մեկ այլ խումբ կարող է կենտրոնանալ կոնկրետ քաղաքականության ոլորտի վրա և գնահատել ծրագրային ֆինանսավորումը: Մեկ այլ մոտեցում կարող է լինել բյուջետային գործընթացի համակարգային ասպեկտների դիտարկումը, կամ համեմատական վերլուծությունների իրականացումը, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վերաբերյալ:

Եթե բյուջետային գործընթացում Ձեր կողմից կատարվող աշխատանքի նպատակը մակրո մակարդակի վրա կենտրոնանալն է, ինչպիսին է պետական դեֆիցիտի և պարտքի գնահատումը, կամ հարկային քաղաքականությունն ու բարեփոխումները, կարող եք մտածել ազգային հարկաբյուջետային հաստատությունների կայքէջերում նյութեր փնտրելու մասին: Դրանք կարող են լինել խորհրդատվական մարմինները (Հայաստանում օրինակ՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհուրդը,), գործադիր մարմինները (օրինակ՝ ֆինանսների նախարարությունը) կամ հարկաբյուջետային ազգային խորհուրդը: (Վերջինը միջազգային փորձում ընդունված ձևաչափ է: Անկախ հարկաբյուջետային հաստատությունների մասին տեղեկատվությունը հասանելի է՝ ԱՀՀ-ների մասին ԵՄ կայքում: https://economy-finance.ec.europa.eu/economic-and-fiscal-governance/fiscal-frameworks-eu-member-states/independent-fiscal-institutions_en

Երբ հստակեցնեք, թե որն է բյուջետային գործընթացում Ձեր կողմից կատարվող աշխատանքի նպատակը և ակնկալվող արդյունքը, այդ ժամանակ կարող եք անցնել գործել:


Հանրային բյուջեների համառոտ ակնարկ

Գոյություն ունեն բյուջեն ընկալելու տարբեր եղանակներ, որոնք կարող են հետագայում որոշել, թե ինչ տեսակի գործունեություն կարող է իրականացնել բյուջետային ոլորտում Ձեր աշխատանքի ընթացքում:

ա) Բյուջեն որպես եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ

Պետական բյուջեն տվյալ ժամանակահատվածի համար պետական ֆինանսների տնտեսական կառավարման հիմնական փաստաթուղթն է: Այն ակնկալվող եկամուտների և պլանավորված ծախսերի ցանկն է, և ներառում է տեղեկատվություն տվյալ բյուջետային կազմակերպության կառավարման հաշվեկշիռի համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ: Եթե եկամուտները հավասար են ծախսերին, ապա բյուջեն հավասարակշռված է: Սակայն դա, որպես կանոն, պատահականություն է: Մեծամասամբ եկամուտներն ու ծախսերը հավասար չեն: Եթե եկամուտը գերազանցում է ծախսը, ապա դա ավելցուկ է (պրոֆիցիտ), հակառակ դեպքում՝ պակասուրդ (դեֆիցիտ):

Ներկայումս, սովորաբար պետական բյուջեները ֆինանսական տարվա վերջում հավելուրդով չեն ավարտվում: Սակայն տեղական բյուջեների դեպքում, իրավիճակն այլ է: Բյուջեի ավելցուկը չօգտագործված միջոցները մնում են որպես տեղական կառավարման սեփականություն: Դրանք կարող են օգտագործվել, օրինակ, պարտքի մի մասը մարելու կամ հետագայում պահուստային օգտագործման նպատակով: Եթե տնտեսությունը դեֆիցիտի իրավիճակում է, ապա տեղական կառավարման մարմինը պետք է ինչ-որ տեղից լրացուցիչ միջոցներ հայթայթի, օրինակ՝ օգտագործի նախորդ տարիների պահուստը կամ պարտք վերցնի կապիտալի շուկայից: Բյուջեի դեֆիցիտը ծածկելու առանձնահատուկ դեպք է գույքի վաճառքը: Առաջին հայացքից բյուջեն կարող է հավասարակշռված թվալ, քանի որ վաճառքից ստացված եկամուտը հայտնվում է եկամտի մասում: Սակայն իրականում, այս գործողությունը չի ազդում դեֆիցիտի չափի վրա, քանի որ այն ընդամենը ակտիվների կառուցվածքի փոփոխություն է:



բ) Բյուջեն որպես ֆինանսական պլան

Բյուջեն հասկանալու երկրորդ ճանապարհը այն որպես ֆինանսական պլան դիտարկելն է: Դրա նպատակն է ներդաշնակեցնել պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի եկամուտների հնարավորությունները ծախսային գործունեության հետ, քանի որ ինչպես յուրաքանչյուր քաղաքացի, այնպես էլ պետական մարմինները սահմանափակված են իրենց ծախսերում՝ իրենց ունեցած միջոցների չափով: Բյուջետավորման անհրաժեշտությունը սահմանափակում է քաղաքականություն մշակողներին իրենց գործունեության մեջ և ստիպում առաջնահերթություններ սահմանել: Այստեղ կարևոր «մեկ տարուց ավելի» ժամկետով մտածելու կարողությունը, այդ նպատակով երկրների մեծ մասում գործող օրենսդրությունը պահանջում է միջնաժամկետ բյուջետային կանխատեսումներ և միջնաժամկետ ծախսերի ծրագրեր:

Պետական բյուջեն, որն օրենքի տեսք է ստանում, ներառում է ֆինանսական փաստաթղթերի ամփոփում, մանրամասն բյուջեն ըստ ոլորտային/գերատեսչությունների և պետական բյուջեի ցուցիչներ: Պետական բյուջեի ցուցիչները դրա կարևոր մասն են, քանի որ մանրամասնորեն որոշում են, թե ինչի վրա պետք է ծախսվեն պետական բյուջեի միջոցները: Այս ցուցիչները պարտադիր են, և կառավարությունը կարող է շեղվել դրանցից միայն կանխորոշված պայմաններում և որոշակի սահմաններում, որոնք սահմանված են օրենքով: Սա մեծապես սահմանափակում է կառավարության կողմից պետական բյուջեի մասին օրենքի խախտմամբ միջոցներն օգտագործելու հնարավորությունները:

գ) Քաղաքականության իրականացման գործիք

Բյուջեն, որն ըստ էության հանդիսանում է ֆինանսական պլան, նաև համարվում է նպատակների և քաղաքականությունների իրականացման գործիք: Բյուջետային ծախսերի կառուցվածքը որոշում է, թե որ գործողություններն են աջակցություն ստանալու, իսկ որոնք՝ ոչ: Սա է պատճառը, որ բյուջեի հաստատումն ամենաքննարկվող և հաճախ ամենավիճահարույց քվեարկություններից է ինչպես տեղական մակարդակում, այնպես էլ ազգային խորհրդարաններում: Գործադիր իշխանությունը կարող է իրականացնել իր քաղաքական ծրագրերը միայն բյուջեի՝ իրենց նախագծած տարբերակը ընդունելու դեպքում:

ՔԱՅԼ 1: Իմացե՛ք Ձեր բյուջեն(երը)

Տարածված պրակտիկա է, երբ երկրում ընդունվում են մեկից ավելի հանրային բյուջեներ ոչ միայն **ուղղահայաց** (քանի որ ժողովրդավարական երկրները հաճախ հետևում են ապակենտրոնացված իշխանության մոդելին, և այդպիսով, տեղական ինքնակառավարման մարմիններին տրվում է ֆիսկալ ինքնավարության որոշակի աստիճան), այլև **հորիզոնական** հարթությունում (առողջապահության և/կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամների բյուջեներ, արտաբյուջետային հիմնադրամների և կազմակերպությունների բյուջեներ):

Միևնույն ժամանակ, հատկապես (բայց ոչ բացառապես) տարածքային ինքնակառավարման քաղաքականության մի շարք ոլորտներ գտնվում են կառավարման տարբեր մակարդակների իրավասության ներքո:⁸ Ավելին, այս բյուջեների միջև սովորաբար տեղի են ունենում դրամական տարբեր հոսքեր որպես տրանսֆերտներ, սուբսիդիաներ և նույնիսկ վարկեր ու հետվճարումներ:

Մեկից ավելի պետական (հանրային) բյուջեների համակարգի և նույն պետության մի քանի պետական մարմինների և կառավարման մարմինների միջև լիազորությունների և պարտականությունների բաշխումը կարող է հանգեցնել անորոշության: Այսպիսով, **յուրաքանչյուր ոք, որը հետաքրքրված է ճշգրիտ և իմաստալից բյուջետային աշխատանքով, առաջին քայլով պետք է ծանոթանա երկրի բյուջետային լանդշաֆտին** (այսինքն՝ ինչպիսի՞ն է բյուջետային համակարգը, ինչպիսի՞ բյուջեներ կան և ինչպիսի՞ն են դրանց միջև ընդհանուր փոխազդեցությունն ու հարաբերությունները) և **թիրախային ոլորտի բյուջեին**:

Որպես կանոն, այս կամ այն պետական մարմնին հատկացված բյուջեում ներառված են նաև այն կազմակերպությունները, մարմինները, որոնք իրենց գործունեության բնույթով կապված

**ԾԱՆՈԹԱՑՆ՝ Ք
ՀԱՆՐԱՅԻՆ
ԲՅՈՒՋԵՆՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻՆ**

*Միջկառավարական փոխանցումներ. ֆինանսական ռեսուրսների փոխանցումներ կառավարությունների միջև՝ պետական ծախսերին աջակցելու նպատակով: Երկրները այլ երկրների կառավարություններին իրենց եկամուտների հաշվին կատարվելիք փոխանցումները նախատեսում են ֆիսկալ համակարգում; Այս փոխանցումները նպատակ ունեն աջակցելու տարբեր ոլորտների զարգացմանն ու բարելավմանը: Թեև, ընդհանուր առմամբ, փոխանցումները պետական վճարումներ են, որոնք կատարվում են առանց դրա դիմաց ապրանքներ կամ ծառայություններ ստանալու պայմանի, սակայն հաճախ դրոշմը կարող է պահանջել, որ միջոցները «նախատեսվեն» և ծախսվեն որոշակի ծրագրի վրա: (Աղբյուր՝ **Future Learn**)*

Ձեր երկրի բյուջետային կառուցվածքին ծանոթանալու համար հարկավոր չէ գրոյից սկսել, քանի որ ներկայում հասանելի են տարբեր ռեսուրսներ: Օրինակ, Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) մշակում է առանձին երկրների, այդ թվում՝ Հայաստանի, ֆիսկալ թափանցիկության գնահատականներ: Այս գեկույցներում նկարագրված է կառավարման ոլորտի կառուցվածքը բյուջետային գրասենյակների համատեքստում: Տես՝ <https://www.imf.org/external/pubs/ft/scr/2019/cr19134.pdf>

**ՄԱՀՄԱՆԵ՛Ք ՁԵՁ
ՀԵՏԱՔՐՔՐՈՂ
ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ
ԿԱՄ ՄԱՐՍԻԻ
ԲՅՈՒՋԵՆՆԵՐԸ**

⁸ Չեխիայի Հանրապետությունում, օրինակ, կրթության ոլորտը և լիազորությունները բաշխված են ներքին կառավարման բոլոր երեք մակարդակների միջև՝ ազգային, տարածաշրջանային և համայնքային:

են վերը մարմնի հետ: Այդպիսիք կարող են լինել օրինակ՝ պետության մասնակցությամբ ստեղծված հիմնադրամները:

Բյուջեն կամ դրա բաղադրիչներն ուսումնասիրելու համար նախ պետք է ունենալ հասանելիություն այդ փաստաթղթին: Դրանք, որպես կանոն, հասանելի են Ֆինանսների նախարարության (ՖՆ) կայքում: Միննույն ժամանակ, դրանք սովորաբար վերաբերում են «մակրո» տվյալներին, ներառում են՝ եկամուտների, ծախսերի հետ կապված ընդհանուր գումարների մասին ամփոփ տեղեկատվություն կամ այլ ցուցանիշներ: Եթե Դուք փնտրում եք ավելի կոնկրետ կամ մանրամասն տեղեկատվություն, օրինակ՝ կոնկրետ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեն, ապա, ամենայն հավանականությամբ, այս տեղեկատվությունը կգտնեք համապատասխան մարմնի կայքէջում: Եթե տեղեկատվությունը հասանելի չէ կամ բավարար չափով համապարփակ չէ, ապա կարող եք դրանք ստանալ հարցման միջոցով, դեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջներով: Պետք է հիշել, որ թիրախային ոլորտի բյուջեի ուսումնասիրության և/կամ վերլուծության առարկան կարող է յուրաքանչյուր անգամ տարբեր լինել՝ պայմանավորված այն հանգամանքով, թե կոնկրետ ինչ նպատակ եք հետապնդում բյուջեի վերլուծությամբ: Այնուամենայնիվ, խորհուրդ է տրվում մասամբ հասկանալ բյուջեի կառուցվածքն ու բովանդակությունը:

**ԻՄԱՅԵ՛Ք՝ ՈՐ
ԿԱՌՈՒՅՑ Է
ՊԱՏԱՄԽԱՆՍՈՒ
ԹԻՐԱԽԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ
ԵՎ ԱՅՑԵԼԵ Ք ԱՅԴ
ԿԱՌՈՒՅՑԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ՝
ԲՅՈՒՋԵԻՆ
ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

Բյուջեի կառուցվածքը

Կատարյալում, բյուջեն պետք է արտացոլի կառավարության բոլոր ֆինանսական գործարքների հանրագումարը՝ հավաքագրվելիք ընդհանուր եկամուտները, ծախսվելիք միջոցները, մարվելիք պարտքերը և ստանձնվելիք նոր ու հին պարտավորությունները: Կառավարության ֆինանսական վիճակի ամբողջական պատկերը հնարավոր չէ պատկերացնել, եթե որոշ ծրագրեր, գերատեսչություններ կամ պարտավորություններ «բյուջեից դուրս են» կամ նախատեսված չեն բյուջեով: Օրինակ, որոշ պետական սուբյեկտներ հաճախ ամբողջությամբ չեն ընդգրկվում բյուջեի՝ հանրագումարներում՝ պատճառաբանելով, որ դրանք կիսով չափ ինքնավար են և ենթադրաբար ինքնաբավ: Այնուամենայնիվ, եթե այդ կազմակերպությունները (լինի կոմունալ ընկերություն, թե ազգային ավիաընկերություն) ձախողվում են, դրանք սովորաբար «փրկում» են պետական միջոցներով: Այս չնախատեսված և չհաշվառված ծախսերը կարող են զգալի ցնցում լինել բյուջեի համար և միջոցներ «խլել» այլ առաջնահերթություններից:

Բյուջեն չի ներառում բոլոր ֆինանսական գործառնությունները այլ ավելի շուտ ներառում է ընդհանուր հատկացումները և դրանց հիմնական նպատակը: Բյուջեի մասին իրավական ակտում հիմնական թվերը ցուցանիշներն են՝ դրանք բաժանված են ամփոփ, խաչվող և կոնկրետ ցուցիչների: Համախառն ցուցանիշները, սահմանում են ընդամենը բյուջեի, կամ բյուջեի առանձին ուղղությունների ընդհանուր եկամուտներն ու ծախսերը: Խաչվող ցուցիչներն օգտագործվում են ոլորտային գերատեսչությունների ընտրված առանձին ծախսերին ուղղված միջոցների ծավալը որոշելու համար (օրինակ՝ աշխատողների աշխատավարձերը, հետազոտության և զարգացման համար ֆոնդերի հատկացումները և այլն): Հատուկ ցուցանիշները տարբերվում են յուրաքանչյուր առանձին ոլորտում կամ առանձին գերատեսչություններում (օրինակ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջեի մասով հատուկ ցուցանիշներ են կենսաթոշակային ծախսերը, պետական սոցիալական աջակցության նպաստների ծախսերը, ակտիվ զբաղվածության քաղաքականություն ծախսերը և այլն):


Բյուջեների և ֆինանսական ֆոնդերի եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման հոդվածների ստանդարտացված դասակարգումը կոչվում է բյուջեի կառուցվածք և սովորաբար որոշվում է ՖՆ-ի կողմից (ՀՀ-ում սահմանվում է ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքով): Բյուջեն եկամուտների և ծախսերի միասնական դասակարգման համակարգ է, որը պարտադիր է բոլոր բյուջետային միավորների համար: Դասակարգումը թույլ է տալիս ստանդարտացված մոնիթորինգ իրականացնել կառավարության դրամական միջոցների ընդհանուր հոսքերի նկատմամբ:

ՔԱՅԼ 2: Հետևե՛ք ժամանակացույցին

Պետական բյուջեները կազմվում են մեկ տարվա համար: Այնուամենայնիվ, ընդհանուր բյուջետավորման գործընթացը ավելի երկար է տևում, և ընդունված պրակտիկա է, երբ պետական մարմինները միաժամանակ զբաղված լինեն նույնիսկ երեք տարբեր բյուջեներով: Տարբեր երկրներում բյուջետային գործընթացի ժամանակացույցը սահմանվում է օրենքներով (օրենք կամ այլ իրավական ակտ), որը հաճախ անվանում են «բյուջետային օրենսդրություն»: Օրենսդրությունը սահմանում է կոնկրետ ժամկետներ, այդ թվում վերջնաժամկետները (օրինակ՝ պետական բյուջեն պետք է վերջնական տեսքի բերվի մինչև սեպտեմբերի վերջ), և հարաբերական ժամկետներ, այսինքն՝ ժամանակային սահմանափակումները (օրինակ՝ համայնքապետարանի բյուջեի առաջարկը պետք է հրապարակվի քննարկումից 15 օր առաջ):

Բյուջետային օրենսդրություն: Այս եզրույթը վերաբերում է իրավական ակտերին, որոնք կարգավորում են կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների տարեկան բյուջեները, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և բյուջեների կատարման հաշվետվությունները, բյուջետային գրասենյակների գործառնություններին: Օրենսդրությունը նաև սահմանում է բյուջետային պարբերաշրջանի տարբեր փուլերի ընթացակարգերը, ներառյալ՝ հիմնական պայմաններն ու ժամկետները, կարգավորում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և արտաբյուջետային կազմակերպությունների ֆինանսական կառավարումը, սահմանում է բյուջեի եկամուտներն ու ծախսերը, ֆինանսական ակտիվները, պարտավորությունները, դրամաշնորհները և սուբսիդիաները, պետական ֆինանսների և պարտքի կառավարումը, ինչպես նաև ժամանակավոր բյուջեի մշակումը:

Գծապատկեր 1. Տարվա ընթացքում տարբեր բյուջեների հանրագումարը պատկերող գծապատկեր



Ծանոթացեք բյուջետային ոլորտի կարգավորումներին (Հայաստանի դեպքում՝ Բյուջետային գործընթացը սկսելու մասին ՀՀ Վարչապետի վերջին որոշումը, որն է՝ ՀՀ Վարչապետի 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 86-Ա որոշումը՝ ՀՀ 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին⁹) և փնտրեք ժամանակի կառավարման հետ կապված դրույթներ, այնուհետև մշակեք ձեր ոլորտին համապատասխան ժամանակացույց: **Նախ նշեք կոնկրետ ամսաթվերը, այնուհետև հարաբերական ժամկետները:** Ձեր ժամանակացույցը կազմելիս հիշեք, թե ինչ խնդիր է դրված որոշում կայացնող կամ իրականացնող մարմինների կողմից և ովքեր են ներգրավված գործընթացում: Ամփոփիչ աղյուսակը կարող է ունենալ ներքևում բերված կառուցվածքը, սակայն խնդրում ենք նկատի ունենալ, որ տարբեր երկրներում այս ժամանակացույցը տարբեր է՝ կախված ազգային օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից:

ԾԱՆՈԹԱՑԵՔ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԳՈՐԾՆԵՆԹԱՑԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ԱԿՏԵՐԻՆ ԵՎ ՓՆՏՐԵՔ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Գծապատկեր 2. Բյուջեի ժամանակացույցի պատկեր

ԺԱՄԿԵՏ	ՓՈՒԼ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ
Մինչև ապրիլի վերջ	Բյուջեի աուդիտ	Պետության վերջնական հաշվետվության նախագծի վերջնականացում (տարեվերջյան հաշվետվություն)
Մինչև հունիսի վերջ	Բյուջեի ձևակերպում	ՖՆ-ի կողմից բյուջետային մարմիններին ուղարկված նախնական բյուջետային հատկացումների սահմանաչափեր
Հունիսի վերջից հետո	Բյուջեի իրականացում	Իրականացման միջնաժամկետային հաշվետվություն ¹⁰
Մինչև հուլիսի վերջ	Բյուջեի ձևակերպում	ՖՆ-ին ներկայացված ոլորտային/գերատեսչությունների բյուջեները
Մինչև Սեպտեմբերի վերջ	Բյուջեի ընդունում	Բյուջեի նախագծի և ֆինանսական տարվան հաջորդող տարիների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի վերջնականացում:
...

⁹ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=119892>

¹⁰ Հարկ է նշել, որ Հայաստանի բյուջետային գործընթացում միջնաժամկետային հաշվետվություն չի հրապարակվում:

Հայաստանի մասով բյուջետային գործընթացը սկսելու և բյուջետային ցիկլի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները հասանելի են Օրագրի շրջանակներում ՏՀԿ-ի կողմից մշակած «Բյուջեի վերլուծություն և մշտադիտարկում»¹¹ և ԻՀԱ-ի կողմից «Բյուջետային գործընթացի շահերի պաշտպանության գործիքները և հմտությունները»¹² ՔՀԿ-ների համար մշակած հանրամատչելի ուղեցույցերում:

Եթե Ձեզ հետաքրքրում է թե ինչպես է մշակվում պետական բյուջեն, և ապա՝ ընդունվում, ապա այս գործընթացին կարող եք ծանոթանալ մոտք գործելով կառավարության, տարբեր գերատեսչությունների և Խորհրդարանի ինտերնետային էջերը: Այստեղ Դուք նաև կգտնեք օգտակար տեղեկատվություն և ժամանակացույց նախատեսվող հանդիպումների և միջոցառումների վերաբերյալ: Այս ժամանակացույցը լրացուցիչ անգամ կօգնի Ձեր ժամանակացույցը մշակելու համար:

ԾԱՆՈԹԱՅԵ՛Ք
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸԻ
ԻՐԱՎԱՍՏԵՂԾ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ

¹¹ <https://budgets.am/2023/12/04/892/>

¹² <https://budgets.am/category/information/shp/>

Բյուջետային գործընթացի բացատրություն

Ինչպես արդեն նշվեց, անկախ այն հանգամանքից Ձեր հետաքրքրության շրջանակը ներառում է պետական թե տեղական բյուջեն, մեկ ֆինանսական տարվա բյուջետային գործընթացը միշտ տևում է ավելի քան մեկ օրացուցային տարի: Դա պայմանավորված է նրանով, որ ամբողջ գործընթացը, բացի բուն բյուջեի կատարումից/իրականացումից, ներառում է նաև նախապատրաստական աշխատանքներ (ֆինանսական տարվան նախորդող տարիներ) և նախորդ տարվա բյուջեի կատարողականի գնահատում և վերջնական հաստատում:

Ա. Բյուջեի ձևավորումը

Պետական բյուջեի գործընթացը սկսվում է առանձին գերատեսչությունների և պետական մարմինների կողմից բյուջեի առաջարկի պատրաստումից, որն այնուհետև համախմբվում է ՖՆ-ի կողմից: ՖՆ-ը ոլորտային գերատեսչություններին տեղեկացնում է բյուջեի նախնական հատկացումների և այլ պարտադիր թվային տվյալների (բյուջետային ցուցանիշների) մասին մինչև հունիսի վերջ: Ոլորտային/գերատեսչությունները նույն ձևով տեղեկացնում են իրենց տիրույթում գործող բյուջետային կազմակերպություններին (պետական կազմակերպական ստորաբաժանումներ, արտաբյուջետային հիմնադրամներ), և արդյունքում իրենց համապատասխան ոլորտային/գերատեսչության բյուջեն ՖՆ են ներկայացնում մինչև հուլիսի վերջ: ՖՆ-ը բյուջեի նախնական հատկացումների մասին տեղեկացնում է նաև տեղական ինքնակառավարման մարմիններին, այնուհետև տեղական ինքնակառավարման մարմինները վերանայում են իրենց տեղական ինքնակառավարման բյուջեները:

Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեի առաջարկները հավաքվում են բյուջեի կառավարչի կողմից (որը սովորաբար համայնքի ղեկավարն է, տնտեսական բաժնի ղեկավարը կամ համայնքային խորհրդի ներկայացուցիչը): Բյուջեի կառավարիչը առաջարկը կազմում է կամ ինքնուրույն, կամ բյուջեի ստորադաս կառավարիչների փաստաթղթերի հիման վրա: Բյուջեի ստորադաս կառավարիչներն են՝ համայնքապետարանի բաժինների, կազմակերպական ստորաբաժանումների ղեկավարները կամ կիսա/արտաբյուջետային կազմակերպությունների տնօրենները: Բյուջեի կառավարիչն այստեղ ընկալվում է պետական բյուջեի նախագծի պատրաստման համար պատասխանատու:

Բ. Ընդունում

Թեև տեղական բյուջեների ընդունումն ընդհանուր առմամբ նվազ բարդության է (ինչպես և տեղական բյուջեները՝ ի տարբերություն պետական բյուջեների), սակայն պետական բյուջեի մասին օրենքն ընդունելու համար անհրաժեշտ ընթացակարգը տևում է մի քանի ամիս: Սովորաբար գործընթացը տեղի է ունենում նախորդ տարվա վերջին եռամսյակում:

Գործընթացը սկսվում է, երբ գործադիր իշխանության կողմից բյուջեի նախագիծը ներկայացվում է օրենսդիր իշխանություն՝ այն քննարկելու (որը կարող է ներառել լուսումնաբերական Խորհրդարանի տարբեր հանձնաժողովներում) և ընդունելու համար: Տարբեր երկրներում այս գործընթացի կազմակերպումը, այդ թվում բյուջեի նախագծում Խորհրդարանի կողմից փոփոխություններ կատարելու կարգը նախատեսված է ազգային օրենսդրություններով:

Գ. Կատարում

Բյուջեի կատարումը սկսվում է այն ժամանակ, երբ կառավարությունը նախաձեռնում է բյուջեի մասին օրենքով նախատեսված ծախսերը: Սակայն գործնականում, բյուջեները միշտ չէ, որ կատարվում են հենց այնպես, ինչպես դրանք հաստատվել են. ֆինանսավորման մակարդակները միշտ չէ, որ պահպանվում են, և հաստատված միջոցները միշտ չէ, որ ծախսվում են այն նպատակների համար, որոնց համար դրանք հաստատվել են: Ինչպես ավելի մանրամասն բացատրվում է ստորև, այս շեղումները կարող են արտացոլել մի շարք գործոններ՝ սկսած պայմանների փոփոխությունից մինչև կոռուպցիա: Այն դեպքում, երբ թույլատրված և փաստացի ծախսերի միջև բացը մեծ է, քաղաքացիական հասարակությունը պետք է բացատրություն պահանջի:

Դ. Աուդիտներ և կատարողականի գնահատումներ

Բյուջետային պարբերաշրջանի վերջին փուլը ներառում է մի շարք գործողություններ, որոնց նպատակն է չափել հանրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը: Կատարյալում, գործադիր իշխանությունը իր հարկաբյուջետային գործունեության մասին պետք է զեկուցի օրենսդիր մարմնին և հանրությանը: Օախսերը պետք է նաև պարբերաբար վերանայվեն անկախ և մասնագիտացված մարմնի կողմից, ինչպիսին է աուդիտորական կազմակերպությունը կամ երկրի գլխավոր աուդիտորը (Հայաստանի դեպքում՝ ՀՀ հաշվեքննիչ պալատն է): Այս մարմնի եզրակացությունները պետք է ներկայացվեն օրենսդիր մարմնին, որը ինչ-որ առումներով ապահովում է գործադիր մարմնի հաշվետվողականությունը: Գնահատումը և աուդիտը թույլ են տալիս օրենսդիրներին ոչ միայն որոշել, թե արդյո՞ք կառավարությունը գործել է բյուջեի մասին օրենքին համապատասխան, այլ նաև, թե ինչպե՞ս են հանրային ռեսուրսները օգտագործվում: Այդ իսկ պատճառով, բյուջետավորման գործում ժամանակակից բարեփոխումները մեծ ուշադրություն են դարձնում իրավասու մարմիններին բյուջեի կատարողականի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու վրա դրանց կատարողականը բարելավելու նպատակով:

Բյուջետային պարբերաշրջանի ընթացքում ներգրավված են ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության տարբեր ինստիտուտներ և կազմակերպություններ, դրանք են.

**ՈՐՈՇԵ՛Ք Ո՞Ր
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԵՆ ՁԵՁ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ**

- **Ֆինանսական կառավարիչներ,**
- **բյուջետային մարմիններ** (այսինքն այն հաստատությունները, որոնք իրականացնում են բյուջետային ծրագրեր,
- **խորհրդատվական և վերահսկող մարմիններ,**
- **որոշումներ կայացնողներ** (այսինքն՝ քաղաքական գործիչներ),
- **վերահսկող/աուդիտորական մարմիններ** (օրինակ՝ Աուդիտի Բարձրագույն Մարմին/Հաշվեքննիչ պալատ):

Այս հաստատություններն ունեն տարբեր դերեր, որոնք տարբերվում են բյուջետային պարբերաշրջանի փուլերում:

Գծապատկեր 3. Բյուջետային գործընթացի տարբեր մարմիններ (Հապավումներ՝ ՆՊ – նախապատրաստում, ԸՆ – Ընդունում, ԿՏ – կատարում, ԳՆ – գնահատում)


հաստատության տեսակը	օրինակ	փուլ			
		ՆՊ	ԸՆ	ԿՏ	ԳՆ
Կառավարիչներ	ՖՆ (կենտրոնական կառավարման մակարդակ), Համայնքապետարանի տնտեսական վարչություն (տեղական ինքնակառավարման մակարդակ)	X	X	X	
Բյուջետային մարմին	Նախարարություններ, պետական մարմիններ և գերատեսչություններ, գրասենյակներ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն:	X		X	X
Խորհրդատվական մարմիններ	Խորհրդարանի հանձնաժողովներ		X	X	X
Որոշումներ կայացնողներ	Խորհրդարան, Համայնքային խորհուրդ/Ավագանի		X	X	X
Վերահսկող մարմիններ	Աուդիտի Բարձրագույն Մարմին/ Հաշվեքննիչ պալատ				X

Ելնելով բյուջետային գործընթացում Ձեր կողմից կատարվող աշխատանքի նպատակից, հարկավոր է սահմանել, թե բյուջետային գործընթացի որ փուլն էք նախատեսում մշտադիտարկել և նշել իրավասու ոլորտային մարմինը: Օրինակ, եթե Ձեր խնդիրը վերաբերում է բյուջեի պլանավորման գործընթացին, ենթադրենք՝ կրթության ոլորտի քաղաքականության համար պետական բյուջեով նախատեսված հատկացումներին, ապա իրավասու մարմինը ոլորտային գերատեսչությունն է և խորհրդարանի կրթության հարցերով

զբաղվող հանձնաժողովը: Եթե ցանկանում եք մշտադիտարկել բյուջեի նախագծի և խորհրդարանի կողմից ընդունված բյուջեի մասին օրենքի միջև տարբերությունը և հասկանալ, թե արդյոք նախագիծը փոփոխվել է ընդունելուց առաջ, ապա համապատասխան իրավասու մարմինները կլինեն Ազգային ժողովը, Ազգային ժողովի բյուջետային (ֆինանսավարկային) հանձնաժողովը և այլն:

Երբ ավարտեք այս վարժությունը, պետք է ստացված տեղեկատվությունը մուտքագրեք ժամանակացույցի աղյուսակում: Ձեր մշակած ժամանակացույցը կօգնի հետևել, թե ի՞նչ է կատարվում բյուջետային պարբերաշրջանում: Վերջնաժամկետները և այլ պայմանները սովորաբար պահպանվում են, երբ որևէ փաստաթուղթ է հրապարակվում: Բյուջետային պարբերաշրջանի տարբեր փուլերում պատրաստվում են մի շարք փաստաթղթեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵ՛Ք
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՏԱՐԲԵՐ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ



Ստորև բերված աղյուսակում կարող եք գտնել բյուջետային փաստաթղթերի և հնարավոր գործողությունների ցանկը, որոնք կարող եք դիտարկել Ձեր բյուջետային աշխատանքի համար:¹³

Գծապատկեր 4. Բյուջետային պարբերաշրջանի հետ կապված օրինակելի փաստաթղթերի ցանկ՝ ԷՀԿ-ների համար հնարավոր գործողություններով (Ե-եռամսյակ, ՖՏ-Ֆինանսական տարի):

Փաստաթուղթ	Բովանդակություն	Հնարավոր գործողություններ
Բյուջետային ուղերձ	<ul style="list-style-type: none"> • սահմանել առաջիկա բյուջեի ձևավորման 	<ul style="list-style-type: none"> • մեկնաբանում է մակրոտնտեսական քաղաքականության

¹³ Բովանդակությունը վերցված է այստեղից. <https://internationalbudget.org/wp-content/uploads/Guide-to-Transparency-in-Government-Budget-Reports-How-Civil-Society-Can-Use-Budget-Reports-for-Research-and-Advocacy-English.pdf>

<p>(Ե1-2, ՖՏ - 1)</p>	<p>հիմքում ընկած մակրոտնտեսական ենթադրությունները,</p> <ul style="list-style-type: none"> • ձևակերպել կառավարության հարկաբյուջետային ռազմավարությունը և դրա հիմքում ընկած հիմնավորումը, • դիտարկել միջնաժամկետ հեռանկարը, ապահովում բյուջեի կայունությունը և կառավարության վճարունակությունը. • նկարագրել ոլորտային և ենթաոլորտային բյուջեի առաջնահերթությունները 	<p>նպատակահարմարությունը (համապատասխանությունը ներկա տնտեսական իրավիճակին, քաղաքականության թիրախներին),</p> <ul style="list-style-type: none"> • պահանջել հիմնավորում ենթադրությունների և կանխատեսումների համար՝ հիմնված միջազգային և այլ անկախ ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված վերլուծությունների վրա, • համեմատել նախորդ տարիների բյուջեները և հետևել ծրագրային առաջնահերթություններին, • իրականացնել լոբբինգ օրենսդիրների շրջանում՝ իրավական ակտի քննարկմանն ընդառաջ ազդեցություն ունենալու նպատակով, • նախաձեռնել քննարկումներ ոլորտային գերատեսչությունների և ՖՆ-ի հետ այն հարցերի շուրջ, որոնց վերաբերյալ առկա են էական տարաձայնություններ, • կազմել այլընտրանքային բյուջե
<p>Բյուջեի նախագիծը (Ե3, ՖՏ - 1)</p>	<ul style="list-style-type: none"> • Կառավարության բյուջեի առաջարկը օրինագծի տեսքով ներկայացնել օրենսդիրներին (օրենքի նախագիծ), ներկայացնել բյուջեի հիմնական ցուցանիշները (ներառյալ մնացորդը/դեֆիցիտը) և ներառելով բազմաթիվ հավելվածներ եկամուտները, ծախսերը և ֆինանսավորումը ընդգրկող աղյուսակներով, • ներկայացնել այլ հանրային բյուջեների հետ պետական բյուջեի փոխհարաբերություններին վերաբերող թվեր 	<ul style="list-style-type: none"> • գնահատել տարբեր ոլորտներին հատկացումները, • գնահատել ծախսերի բաշխումն ըստ պարտավորությունների մակարդակի (քվազի-/պարտադիր ծախսեր՝ համեմատած մյուսների հետ), • համեմատել երկարաժամկետ / բազմամյա միտումները, • լայն հանրության համար բյուջետային ուղեցույցների մշակում
<p>Հաստատված բյուջե (Ե4, ՖՏ - 1/ Ե1, ՖՏ)</p>	<ul style="list-style-type: none"> • օրենքով հաստատված փաստացի բյուջե. • իրավական կարգավիճակ ունեցող բյուջետային փաստաթուղթ (կարևոր է մոնիթորինգի նպատակների համար). 	<ul style="list-style-type: none"> • (նույնը, ինչ բյուջեի դեպքում). • վերանայել տնտեսական կանխատեսումները, չափել տնտեսության փոփոխությունները՝ համաձայն ընդունված բյուջեի հիմքում ընկած տնտեսական կանխատեսումների, • վերանայել ծրագրի կատարողականը և

		<p>մշտադիտարկել բյուջեի ծախսերը,</p> <ul style="list-style-type: none"> • ջատագովել բյուջեի օրինագծում ձեր հատկորոշած ոլորտները և հատկացումները ներառելու համար
<p>Ընթացիկ հաշվետվություններ (պարբերաբար, ՖՏ)</p>	<ul style="list-style-type: none"> • վերանայել բյուջեի կատարման ընթացքում ամսական կամ եռամսյակային կտրվածքով տրված ֆինանսական հաշվետվությունները՝ վեր հանելով փաստացի կատարված ծախսերի և օրենքով նախատեսված ծախսերի պատկերը 	<ul style="list-style-type: none"> • ստանալ պարզաբանումներ հնարավոր շեղումների դեպքում
<p>Կիսամյակային վերանայում (Ե3, ՖՏ)</p>	<ul style="list-style-type: none"> • բյուջետային տարվա առաջին վեց ամիսների վերաբերյալ նկարագրական հաշվետվություններ, որոնք արտացոլում են բյուջեի փաստացի կատարումը և ընթացիկ տնտեսական զարգացումները 	<ul style="list-style-type: none"> • այս հաշվետվությունը սովորաբար շատ օգտակար է ի նախնական փուլում տեղեկատվության աղբյուր ծառայելու տեսանկյունից: Այն տրամադրում է ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համապարփակ մեկնաբանություններ և կարող է օգնել հասկանալ բյուջետային աշխատանքի ամբողջ տեխնիկական բնույթը

ՔԱՅԼ 3: Մշտադիտարկե՛ք և վերլուծե՛ք

Բյուջետային գործընթացում Ձեր աշխատանքի զգալի մասը կկազմի մոնիտորինգային և վերլուծական աշխատանքը: Բյուջեի ամբողջ պարբերաշրջանի ընթացքում մոնիտորինգային (մշտադիտարկման) գործողություններ իրականացնելու բազմաթիվ հնարավորություններ կան՝ կախված Ձեր ընդհանուր նպատակից:

Օրինակ, բյուջեի ձևավորման փուլում, կարող եք գնահատել գործընթացի թափանցիկությունն ու ներառականությունը և համեմատել պետական մարմինների աշխատելառճը: Բյուջեն վերլուծելու տարբեր եղանակներ կան՝ սկսած ոլորտային ուսումնասիրություններից, պատմական միտումներից, ակնկալվող ծախսերի կառուցվածքից մինչև տնտեսական պարբերաշրջան, և այլն: Ընդունման փուլում լիազումար բանավեճերի ժամանակ կարող եք վերլուծել և զեկուցել կռալիցիոն և ընդդիմադիր քաղաքական գործիչների հայտարարությունները, կարող եք գնահատել, թե ինչով է ընդունված բյուջեն տարբերվում նախագծից և այլն: Այդ բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, թե ո՞րն է Ձեր նպատակը, քանի որ միայն այդ դեպքում վերլուծությունները կարող են հետագայում օգտակար լինել:

Կարևոր է հիշել, որ բյուջեն (անկախ նրանից, թե որքան համապարփակ է) հետևյալն է.

- (i) միայն պլան. այն կանխատեսում է և՛ եկամուտները, և՛ ծախսերը, սակայն իրականությունը կարող է տարբերվել իրականացման գործընթացում,
- (ii) երբեք չի կարող ընդգրկել բոլոր գործարքները, քանի որ այն ամփոփում է բյուջետային հատկացումները և չի ընդգրկում պետական բոլոր միջոցները. և
- (iii) «թղթի վրա» է – այսինքն՝ ծառայությունների մատուցման որակի մասին տեղեկություններ չի տրամադրում:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գոյություն ունեն բազմակողմ կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկը) կողմից մշակված տարբեր գործիքներ, որոնք հասանելի են առցանց և կարող են օգտագործվել բյուջետային գործընթացի շուրջ համապարփակ աշխատելու, ինչպես նաև գործընթացի որոշակի փուլի կամ ասպեկտի վերլուծության համար:

Այս գործիքները սահմանում են այն սկզբունքները, որոնք ինչպես ցույց է տվել փորձը, պետք է հիմք հանդիսանան պետական հատվածի կառավարման կարգավորման համար, տրամադրեն մեթոդներ՝ գնահատելու երկրի կարգավորումների համապատասխանեցումը ընդունված սկզբունքներին. և ներկայացնել այս գնահատականները այնպիսի ձևաչափով, որը կոյուրացնի կառավարության, դոնորների և քաղաքացիական հասարակության միջև բարեփոխումների առաջնահերթությունների շուրջ երկխոսությունը: Թեմաները ներառում են.

- Կառավարության քաղաքականություն մշակող ինստիտուտների գնահատում,
- Ծառայությունների մատուցման կարգավորումներում սահմանափակումների գնահատում,
- Եկամուտների կառավարման վերաբերյալ հատկորոշիչ նորմերի շրջանակ,
- Կառավարման և աղքատության հաղթահարման գործիքներ,
- Միջկառավարական հարաբերությունների ինստիտուցիոնալ վերանայում, և
- Պետական ծախսերի ինստիտուցիոնալ գնահատում:

Տես՝ <http://www1.worldbank.org/publicsector/pe/petoolkit.htm> և <http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/toolkits.htm> (Աղբյուրը՝ ՄԳԳ)

Օրինակ, հարցերը, որոնց կարելի է պատասխանել բյուջեի վերլուծությանը, հետևյալն են.

- Որքա՞ն են ծախսում պետությունը կամ համայնքապետարանը:
- Վերջնական գումարի ո՞ր մասն է հատկացվում տարբեր ոլորտների:
- Որքա՞ն գումար է հատկացվում սովորական գործառնական ծախսերին և աշխատավարձերին, որքա՞ն գումար է վերաբաշխվում փոխանցումների միջոցով և որքա՞ն գումար է ներդրվում:
- Որքա՞ն է կազմում մեկ քաղաքացու վրա ծախսվող գումարը: Համայնքների դեպքում կարող էք համեմատել նմանատիպ համայնքների հետ (օրինակ՝ բնակչության նույն թվաքանակն ունեցող համայնքները):
- Հավասարակշռվա՞ծ են արդյոք եկամուտներն ու ծախսերը: Եթե ոչ, ինչո՞ւ է այդպես:

Համայնքի բյուջետային կանոնները սահմանում են ընթացակարգեր այն դեպքերի համար, երբ կառավարությանն անհրաժեշտ է շեղվել ընդունված բյուջեից¹⁴: Միևնույն ժամանակ չպետք է բացառել, որ բյուջետային գործընթացի թերիությունը կամ թույլ կառավարման համակարգը կարող է հանգեցնել հատկացված և վճարված միջոցների անհամապատասխանությանը: Վերլուծելու համար, թե արդյո՞ք դա կարող է լինել Ձեր հետաքրքրության ոլորտում, կարող էք մշակել մեթոդոլոգիա, որով կգնահատեք, թե որոշակի նպատակի համար հատկացված միջոցները ինչպես են ծախսվում:

Ծախսերի մոնիթորինգը կարող է շատ դժվար լինել. ֆինանսական հաշվետվությունները, որոնք պարբերաբար հրապարակվում են (սովորաբար ՖՆ-ի կողմից) վերաբերում են միայն եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարին, ի վերջո դրանք կարող են բաժանվել ենթա-գումարների՝ ըստ նախապես սահմանված հատուկ ենթա-ցուցիչների (ինչպիսիք են՝ աշխատավարձերի և պայմանագրային անձնակազմի գումարները, գործառնական ծախսերի գումարը և այլն), այնուամենայնիվ, անհնար է գնահատել այդ ծախսերի արդյունավետությունը:

¹⁴ Հարկ է նաև նշել, որ սա փորձի ներկայացում է, և օրինակ՝ այն ՀՀ-ի դեպքում կիրառելի չէ, քանի որ համայնքների բյուջեները չեն կարող դեֆիցիտային լինել:

Ավելի լավ հասկանալու համար, թե ի՞նչ են ստացել իշխանությունները իրենց ֆինանսական միջոցների դիմաց, անհրաժեշտ է վերլուծել պայմանագրերը: Պետական մարմնի և մատակարարի միջև պայմանագրերը սովորաբար փակվում են գնումների գործընթացից հետո: Տարածված կարծիք կա, որ երկրներն ունեն գնումների կենտրոնացված տեղեկատվական համակարգ, որը ցույց է տալիս անցած և ընթացիկ գնումները: Բացի այդ, պայմանագրերի ռեգիստրը պետք է հասանելի լինի հանրությանը: Եթե չկա բավարար իրավական բազա, կամ ինչ-ինչ պատճառներով իրավասու պետական մարմինը մանրամասներ չի հրապարակում իրենց գնումների և պայմանագրերի մասին, կարող եք տեղեկատվության տրամադրման հարցում ներկայացնել՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված կարգով:

Ծախսերի տեսակները

Ծախսերը հոգալու պետության պարտավորության տեսանկյունից տարբերակվում են, այսպես կոչված, պարտադիր ծախսեր և քվազի պարտադիր ծախսեր: Դրանց հակառակն են, այսպես կոչված, ոչ պարտադիր ծախսերը:

Ա. Պարտադիր ծախսեր

Պետական ընդհանուր ծախսերի ամենամեծ բաժինը կազմում են պարտադիր ծախսերը, այսինքն՝ այն ծախսերը, որոնք պետությունը պարտավոր է վճարել օրենքով (օրինակ՝ կենսաթոշակներ, արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման վճարներ, գործազրկության նպաստներ և այլն) կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով կամ պայմանագրային պարտավորություններով (մուծումներ ԵՄ և միջազգային կազմակերպությունների բյուջեներին, վերականգնվող ռեսուրսների սուբսիդիաներ և այլն), որոնք միջինում կազմում են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 50–60%-ը:

Բ. Քվազի-պարտադիր ծախսեր

Քվազի-պարտադիր ծախսերը, որոնք կազմում են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի մոտ 20%-ը, օրենքով ուղղակիորեն նախատեսված չեն, սակայն համարվում են անհրաժեշտ, քանի որ դրանց նպատակն է ապահովել պետության գործունեությունը (օրինակ՝ քաղաքացիական ծառայողների, պետական ստորաբաժանումների և ներդրումային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը, պաշտպանության ծախսերը և այլն):

Գ. Ոչ պարտադիր ծախսեր

Պետական բյուջեի ծախսերի մնացած մոտ քառորդ մասը կառավարությանը հնարավորություն է ընձեռում արձագանքել տնտեսական փոփոխություններին և ապահովել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը ներքին քաղաքականություններին համապատասխան (օրինակ՝ ներդրումներ տրանսպորտային ենթակառուցվածքներում, կրթության, սպորտի ոլորտներում և այլն):

ՔԱՅԼ 4: Բարձրացրե՛ք իրազեկվածությունը

Բյուջետային գործընթացում աշխատանքները մեկնարկելուց հետո հնարավորություն կունենաք ծանոթանալ բյուջետային գործընթացի մեխանիզմներին և ընթացակարգերին: Միննույն ժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս ոլորտում պահանջվող գիտելիքների մի մասը ունի տեխնիկական բնույթ և Դուք կաշկանդված եք որոշակի ժամանակացույցով, խորհուրդ է տրվում համակարգել այն ամենը, ինչ սովորել եք: –Ընդ որում, դա կարող եք օգտագործել **ինչպես Ձեր աշխատանքի և թիմի նպատակների համար, այնպես էլ ավելի լայն լսարանի համար:** Ի դեպ, այս ամբողջ նոու-հաուն (know-how) կարող եք օգտագործել ոչ միայն Ձեզ համար, այլև դրանով **բարձրացնել ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:** Այս տեսանկյունից, **բյուջեի ուղեցույցը իրազեկվածության բարձրացման սկզբնական փուլում կարող է ծառայել որպես օգտակար նախագիծ՝** ինչպես կազմակերպական զարգացման, այնպես էլ համապատասխան արտադրանքի ստեղծման համար: Այն կարող է ընդգրկել բյուջետային պարբերաշրջանի և մշակման փուլերի վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, հարակից թեմաներ և այլն:

Ամենատարածված մոտեցումը **բյուջեի ուղեցույցի** ստեղծումն է, որը պետք է ամփոփի օրենսդիր մարմնին ներկայացված տարեկան բյուջեի հիմնական հատկանիշները, բացատրի օրենքի նախագծի բովանդակությունը և դրա ակնկալվող ազդեցությունները և պարունակի կայքերի հղումներ կամ դեպի ավելի մանրամասն փաստաթղթեր հղումներ: Բյուջեի ուղեցույցի հետ կապված հաճախ օգտագործվում է նաև **քաղաքացիների բյուջե** եզրույթը: Տեխնիկական իմաստով, քաղաքացիների պատշաճ բյուջեն չի պատրաստվում ՔՀԿ-ների կողմից, քանի որ այն պետք է կազմի հենց կառավարությունը, սակայն կարևոր է ՔՀԿ-ների հետ համագործակցությունը: Տերմինաբանությունը մի կողմ թողնելով, պետք է նշել, որ բյուջեի ուղեցույցը, որը նաև անվանվում է քաղաքացու բյուջե, ոչ միայն հիանալի գործիք է բյուջետային քաղաքականության բանավեճում ավելի շատ անձանց ներգրավելու համար, այլև կարող է օգնել հասնել ավելի մեծ համակարգային փոփոխության և ոգեշնչել պետական պաշտոնյաներին և քաղաքականություն մշակողներին մտածել կիրառելի ձևաչափի ստեղծման մասին:

ՄՇԱԿԵԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բյուջեի ուղեցույցը հանրամատչելի և պրակտիկ ամփոփում է նկատ ձեռնարկ, որը գրված է հաշվի առնելով լայն հասարակության կարիքները՝ օգտագործելով խոսակցական լեզուն, տրամադրելով պատմություններ, բացատրություններ և հղումներ նրանց համար, ովքեր ցանկանում են ավելի իմանալ:

ՄՍԱԾԵԼ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացու բյուջեն մշակվում է կառավարության կողմից՝ քաղաքացիների հետ խորհրդակցելով. այն հնարավորություն է տալիս հանրությանը հասկանալ և տիրապետել բյուջեին և հանդիսանում է որպես բյուջեի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու «պատուհան»: Այն պետք է կենտրոնանա բյուջեի պլանավորման փաստաթղթերի վրա և հրապարակվի ամբողջական բյուջեի հետ միաժամանակ: Քաղաքացու բյուջեն կարող է տարբեր ձևեր ունենալ, բայց դրա տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ այն նախատեսված է բնակչության հնարավորինս մեծ հատվածին հասցնելու և նրանց կողմից հասկանալու համար: (Աղբյուր՝ [ՏՀԶԿ](#), [ՄԲԳԿ](#))

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԴԱԶԱՄՍՏԱՆՈՒՄ

Մի քանի տարի առաջ Ղազախստանի «Իրավական և տնտեսական բարեփոխումների աջակցության կենտրոն» ՔՀԿ-ը մշակեց «Քաղաքացու բյուջեներ» ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակների համար: 2011թ. մայիսին Ղազախստանի ՖՆ-ը պաշտոնապես ստեղծեց աշխատանքային խումբ՝ իրենց «Քաղաքացու բյուջեի» մշակման և հրապարակման նպատակով ընթացակարգեր և մեթոդաբանություն կազմելու համար: Աշխատանքային խումբը ընդգրկված էին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և Ղազախստանի ազգային բյուջետային ցանցի անդամներ:

Չեռազա ամիսներին, ՖՆ-ի և ՔՀԿ-ների ակտիվ ներգրավվածության հիման վրա, մշակվեց օրենսդրություն՝ Քաղաքացիական բյուջեի մշակումը թույլ տալու մասին: Օրինագիծը, որը ստորագրվել է 2011 թվականի հունիսին, վերաբերում է Քաղաքացիական բյուջեների մշակմանը ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակներում: (Աղբյուր՝ [ՄԲԳ, 2012: 12](#))

Այն դեպքում, երբ բյուջեն էականորեն փոփոխվում է օրենսդիր մարմնի կողմից, **փոփոխություններին հետևելու ուղեցույցը**, որը բացատրում է կատարողական բյուջեի առաջարկի և ընդունված բյուջեի միջև եղած տարբերությունները, կարող է ևս օգտակար լինել: Այլ պարզ լեզվով գրված փաստաթղթերը, նույնպես կարող են պատրաստվել բյուջեի պարբերաշրջանի տարբեր փուլերում:

Ձեզ համար կարող է օգտակար լինել ՏՀԳ հոդվածում նկարագրված ուղեցույցի ստեղծման գործընթացը՝ «Բյուջեի վերաբերյալ քաղաքացիների ուղեցույցի պատրաստում. ինչու, ինչ և ինչպես» խորագրով, որը հասանելի է այստեղ՝ <https://www.oecd.org/gov/budgeting/48170438.pdf> կամ կարդացեք ՄԲԳ ուղեցույցին, որը առավել մանրամասն է մշակված և հասանելի է այստեղ՝ <https://internationalbudget.org/wp-content/uploads/Citizen-Budget-Guide.pdf>

Բյուջեի ուղեցույցների վերաբերյալ կարելի է կազմակերպել մի շարք գործողություններ, օրինակ՝ **տարբեր շահագրգիռ կողմերի վերապատրաստման դասընթացներ** (քաղաքական գործիչներ, լրագրողներ, քաղաքացիներ, տարբեր համայնքներ և այլն), **առցանց կամ դեմատղեմ իրազեկման բարձրագույն արշավներ**, ներառյալ՝ հոդվածների կամ աուդիո-վիզուալ նյութերի տարածում սոցիալական ցանցերում, փողոցային ակտիվիզմի շարքերի պատրաստում, բանավեճերի կազմակերպում կամ տեղեկատվական նյութի (արտադրանքի) էլեկտրոնային կամ տպագիր տարբերակների տարածում, համայնքում անհրաժեշտ քննարկումների կազմակերպումը և այլն:

**ՄՏԱՄԵ՛Ք ԻՆՉՊԵՍ
ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԶԵՌՔ
ԲԵՐՎԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ**

Այս հոդվածում կարող եք գտնել խորհուրդներ արդյունավետ բյուջետային հաղորդակցության վերաբերյալ, որոնք օգտակար կլինեն ոչ միայն քաղաքացիական ծառայողների համար.

<https://www.govloop.com/community/blog/tips-for-effective-budget-communication/>

Գծապատկեր 5. Արդյունքների տեսակները, որոնք կարող են նպաստել հասարակության տեղեկացվածության բարձրացմանը



Բյուջեի վերաբերյալ ոչ բավարար մակարդակի գրագիտությունը շարունակում է բյուջետային գործընթացների էական խոչընդոտը մնալ: Այս խոչընդոտը առկա է ոչ միայն հանրության և ՔՀԿ-ների շրջանում, այլ նույնիսկ օրենսդիր մարմինների մոտ: Ուղեցույցները, դասընթացները և արշավները կարող են նպաստել բարելավելու բյուջետային գրագիտությունը տարբեր թիրախային խմբերի շրջանում: Մեկ այլ կարևոր գործիք է մասնակցային բյուջետավորումը: Այս գործիքի կիրառմամբ հնարավոր է եղել ուժեղացնել **հանրային ուսուցումը և ակտիվ քաղաքացիական մասնակցությունը**: Ինչպես նշված է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնության ՀՀ 2022-2024 թթ. գործողությունների ծրագրում, նախատեսվում է զարգացնել և ընդլայնել մասնակցության հնարավորությունները համայնքային մակարդակում, ներառյալ մասնակցային բյուջետավորումը:

**ՓՆՏԻՆ՝Ք ԵՎ ՏԵՂԵԿԱՑԵ՛Ք ԶԵՐ
ՀԱՄԱՑՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Մասնակցային բյուջետավորում. գործընթաց, որի ընթացքում համայնքի անդամներն ուղղակիորեն որոշում են, թե ինչպես ծախսել հանրային բյուջեի մի մասը: «Այն ներկայացնում է բյուջետավորման ուղղակի ժողովրդավարական մոտեցում: Հանրությանը հնարավորություն է ընձեռվում ծանոթանալ կառավարության գործունեությանը. քննարկել, բանավիճել և ազդել հանրային ռեսուրսների բաշխման վրա: Քաղաքացիներին կրթելու, ներգրավելու և հզորացնելու և լավ կառավարման պահանջարկը ուժեղացնելու գործիք է: Ընդլայնված թափանցիկությունը և հաշվետվողականությունը, որոնց նպաստում է մասնակցային բյուջետավորումը, կարող են օգնել նվազեցնել կառավարության անարդյունավետությունը և զսպել կլիեմտիզմը, հովանավորչությունը և կոռուպցիան»: (Աղբյուր՝ EPRC)

Պատմությունն ապացուցել է, որ պետական բյուջեի պատշաճ և կայուն իրականացումը պահանջում է ՔՀԿ-ների կողմից մեծ ներգրավվածություն, այսինքն պետք է օգտագործեք հնարավորությունն ու պահը և ներգրավվեք Ձեր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացին:

Մասնակցային բյուջետավորում

Բրազիլիայում 80-ականների վերջին ի հայտ գալուց ի վեր՝ մասնակցային բյուջետավորումը տարածվել է բառացիորեն աշխարհի տարբեր անկյուններում և դարձել հանրաճանաչ մասնակցային գործիք ինչպես պաշտոնյաների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում: Մշակվել են մասնակցային բյուջետավորման տարբեր ձևեր, որոնք արձագանքում են տարբեր համատեքստերի և հասարակությունների տարբեր կարիքներին և հնարավորություններին: Սա էլ պատճառը, որ մասնակցային բյուջետավորման մասին միասնական սահմանում չի կարող տրվել: Հիմնականում ՄԲ-ն թույլ է տալիս քաղաքացիների մասնակցությունը պետական ֆինանսների հայեցակարգի մշակմանը և/կամ բաշխմանը: Այնուամենայնիվ, հիշյալին անհրաժեշտ է ավելացնել ևս հինգ չափանիշներ.

- 1) Ֆինանսական/բյուջետային գործընթացների քննարկում. մասնակցային բյուջետավորումը գործ ունի սակավ ռեսուրսների հետ.
- 2) համայնքի ներգրավում.
- 3) տարիների ընթացքում պարբերաբար կազմակերպվող գործընթաց (եթե այն ի սկզբանե նախատեսված է որպես մեկանգամյա իրականացվող միջոցառում, ապա դա մասնակցային բյուջետավորման գործընթաց չէ).
- 4) որոշակի հանդիպումների/ֆորումների շրջանակներում հանրային քննարկման էլեմենտների ներառում (շարքային քաղաքացիների ընդգրկումը «դասական» ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտներում մասնակցային բյուջետավորման գործընթաց չի ներկայացնում).
- 5) գործընթացի արդյունքների վերաբերյալ որոշակի հաշվետվողականություն ապահովում:

ՄԲ-ը հնարավորություն է տալիս հարկաբյուջետային քաղաքականությունը դարձնել հանրային երկխոսության առարկա և քաղաքացիներին ներգրավել բյուջեի պարբերաշրջանի բոլոր փուլերում: Քաղաքացիները կարող են ներգրավվել բյուջեի ամբողջ պարբերաշրջանում, օրինակ՝ հետևյալ եղանակներով.

- տեղական ամենահրատապ կարիքների հատկորոշում և առաջնահերթության սահմանում,
- բյուջեի առաջարկի պատրաստում՝ տեղական իշխանություններին ներկայացնելու համար,, բյուջեի հաստատման գործընթացի վերահսկում (վերանայում, քննարկում և քվեարկություն),
- բյուջեի կատարման մոնիտորինգ, գնումների մոնիտորինգ (մրցույթ, սակարկություններ և պայմանագրերի կնքում) և ծրագրերի իրականացման մոնիտորինգ:

ՄԲ-ը իրանում է «ներքինից վեր» մոտեցումը և համայնքներին հնարավորություն է տալիս սահմանել և վերահսկել պետական ծախսերը, բարելավել հիմնական հանրային ծառայությունների տրամադրումը:

Եթե Ձեր համայնքում ՄԲ չի իրականացվում, ապա կարող եք նաև դիտարկել այս գործիքի խթանումը օրինակ՝ հետևյալ եղանակներով.

- հողվածներ և տեսալսողական նյութեր պատրաստել պաշտոնյաների և քաղաքական գործիչների համար (առաջարկ ստացող կողմ) կամ լայն հանրության համար (պահանջարկ ունեցող կողմ),
- նախաձեռնել հանրագրեր և դրանք ուղարկել տեղական իշխանություններին՝ ՄԲ-ն որպես գործիք դիտարկելու համար,
- ելույթ ունենալ համայնքային խորհրդի (ավագանու) նիստում ՄԲ մեխանիզմի վերաբերյալ և այլն:

Թեև ՄԲ-ի վերաբերյալ վերջնական որոշումը պետք է կայացնի իշխանությունը, ՔՀԿ-ները կարող են մեծապես օգնել այդ գործում:

ՄԱՍՆԱԿՑԱՑԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԱՎԱՆԻՍՑՈՒՄ

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրին Ալբանիայում իրականացվել է Ուրբան ինստիտուտի միջոցով տեղական ՀԿ-ների հետ համագործակցությամբ, օգտագործելով մասնակցային բյուջետավորման խորհուրդները և վերանայված բյուջետային նախագիծը՝ քաղաքացիների մասնակցությունը բյուջետավորման գործընթացին բարելավելու նպատակով: Օրագրի շրջանակներում ընտրվեցին համայնքներ, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները պատրաստ էին բյուջետային գործընթացում ներառել մասնակցային մեխանիզմներ, գործընկերության զարգացումն արդեն ակտիվ էր, և ունեին կազմակերպված քաղաքացիական հասարակության խմբերի նվազագույն բազա:

Օրագիրը սկսվեց քաղաքացիների և տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկման արշավով: Այնուհետև, յուրաքանչյուր տեղամաս բաժանվեց գոտիների: Յուրաքանչյուր գոտում առաջին հանրային հանդիպման ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաները ներկայացրել են բյուջեի կանխատեսումները և ընթացիկ բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվություն: Երկրորդ հանդիպման ժամանակ ընտրվել էին տեղական բյուջեի մասնակցային խորհրդի ներկայացուցիչներ: Այս հանդիպումը սահմանեց նաև համայնքի համար առաջնահերթությունները: Ավագանին և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմը հետագայում իրականացրեցին դաշտային այցեր («ավտոբուսային քարավան»)՝ քաղաքացիների հետ առաջնահերթությունները, առկա սահմանափակումները և հնարավոր լուծումները գնահատելու նպատակով: Քարավանային գործընթացը պաշտոնյաների ու քաղաքացիների համար բացահայտեց հրատապ հարցեր ու խնդիրներ: Այնուհետև, խորհուրդը ինտենսիվ վերապատրաստում է անցել առաջնահերթությունների սահմանման և ֆինանսական պլանավորման վերաբերյալ՝ նախքան համայնքային խորհուրդներին ծրագրեր առաջարկելը, որոնք էլ վերջնական որոշում են կայացրել: (Աղբյուրը՝ [Fölscher](#))

ՔԱՅԼ 5: Դարձե՛ք միջնորդ

ՔՀԿ-ների ներգրավվածությունը ՄԲ-ի գործընթացում իրազեկման և բյուջետային գրագիտության բարձրացման ուսուցումների փուլով չի ավարտվում: Աշխարհի տարբեր երկրներում ՔՀԿ-ները տարիների ընթացքում աշխատել են բյուջեները հեշտ ընկալելի դարձնելու և բնակչության մարզինալացված և սոցիալապես կարևոր հատվածների վրա բյուջետային քաղաքականության ազդեցության ուշադրությունը հրավիրելու ուղղությամբ: ՄԲ-ի նախաձեռնություններն առավել հաջող են եղել այն տեղական ինքնակառավարման մարմիններում/համայնքներում, որտեղ առկա է քաղաքացիական հասարակության մեծ ներգրավվածություն:

Երբ հատկորոշեք այն ի մարմինը, որտեղ առկա է մասնակցային բյուջետավորում, կարող եք այդ գործընթացում ներգրավվել տարբեր միջոցներով, ինչը պայմանավորված կլինի նաև տվյալ մարմնում մասնակցային բյուջետավորման գործընթացի կարգից: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այդ գործընթացում ներգրավվելու որոշ գաղափարներ:

Գծապատկեր 5. Մասնակցային բյուջետավորման գործունեության տեսակներ, որոնցում կարող են ներգրավվել ՔՀԿ-ները

ԸՆՏՐԵՔ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ
ՇՈՒՐՋ ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼՈՒ ԵՔ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

ՄԲ-ի տեսակը	ՄԲ-ը՝ որպես գաղափարների մրցույթ	ՄԲ-ը՝ որպես «համատեղ բյուջետավորում»
	<p>Ընթացակարգ, որտեղ շեշտը դրվում է առանձին քաղաքացիների և բնակիչների ֆորմալ կամ ոչ ֆորմալ եղանակով կազմակերպված խմբերի անկախ գործունեության վրա: Համայնքի ղեկավարությունը հստակ և պարզ կանոններ է սահմանում, որոնք որոշում են, թե ինչ գաղափարներ կարող են ներառվել բյուջեի մեջ:</p> <p>Քաղաքացիները պաշտպանում են իրենց առաջարկությունները, իսկ համայնքապետարանը նրանց գործընկերն է հանդիսանում և օգնում առաջարկությունները վերջնական ու իրագործելի տեսքի բերել, միաժամանակ ապահովելով դրանց տարածումը</p>	<p>Այս ընթացակարգը կարևորում է առանձին քաղաքացիների գաղափարների կապը համայնքի ընդհանուր կառավարման գործընթացի արդյունքների հետ (զարգացման ռազմավարական պլանավորում): Համայնքի ղեկավարությունը որոշում է գործընթացի ձևը, և թե ո՞րն է լինելու ընտրության մեխանիզմը և բյուջետային գերակայությունների ընտրությունը:</p> <p>Առաջարկություններն արվում են կոնկրետ աշխատանքային խմբերում ընդգրկված քաղաքացիների խմբերի կողմից: Քաղաքացիների առաջարկները ստուգվում են տեխնիկական իրագործելիության տեսանկյունից</p>

	<p>հանրության շրջանում: Վերջում անցկացվում է քվեարկություն համայնքի իրագործելի նախագծերի վերաբերյալ, որոնք հասանելի են բոլոր բնակիչներին:</p>	<p>և մտնում ընտրության գործընթաց, որը տարբեր համայնքներում տարբեր ձև է կազմակերպվում: Որոշ տեղերում այն հիմնված է քաղաքացիների ընտրված հատվածի քվեարկության վրա, այլ տեղերում բոլորի համար կազմակերպվում է բաց քվեարկություն, կամ՝ այս երկու օրինակների համակցությամբ է տեղի ունենում:</p>
<p>Գործողություններ, որոնք ՔՀԿ-ները կարող են իրականացնել տարբեր թիրախային խմբերի համար</p>		
<p>Քաղաքականություն մշակողներ և պաշտոնյաներ</p>	<ul style="list-style-type: none"> • Առաջնորդում մասնակցային բյուջետավորման գործընթացով • Մոնիթորինգի իրականացում • Վերահսկողություն և գնահատում • Ուղեցույցների և այլ նյութերի ստեղծում (օրինակ՝ ինտերնետային էջ) 	<ul style="list-style-type: none"> • Քաղաքացիների շրջանում հարցումների անցկացում և ելակետային տվյալների հավաքագրում և տրամադրում • Վերլուծությունների մշակում • Վերահսկողություն և գնահատում
<p>Հանրություն</p>	<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվության տարածում, ներառյալ ժամանակացույցի հետ կապված տեղեկատվություն (երբ և որտեղ տեղի կունենա համայնքային ժողովը, մինչև երբ պետք է ներկայացվեն առաջարկները և այլն) • Ընթացակարգերի մասին իրազեկում • Աջակցություն գաղափարի ձևակերպման հարցում 	<ul style="list-style-type: none"> • Տարբեր (մարզինալացված) շահեր ունեցող խմբերի ներկայացում • Սովերային հաշվետվությունների (զեկույցների) տրամադրում • Բյուջեի հետ կապված տվյալների և թվերի մեկնաբանություն

ՄԲ-ի գործընթացին մասնակցելուց բացի, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ՔՀԿ ոլորտի գործունեությանը, կան բյուջետային գործընթացին մասնակցելու այլ ուղիներ: Քանի որ ՔՀԿ-ները հաճախ սերտ, կանոնավոր կապի մեջ են հասարակության տարբեր հատվածների և շահագրգիռ խմբերի հետ, նրանք կարող են այդ հեռանկարները օգտագործել բյուջեի որոշումների կայացման գործընթացում և ընդգծել ստացած տեղեկատվության և քաղաքականության այն հարցերը, որոնք

**ԱՌԱՆՁՆԱՅՐԵ՛Ք
ԿԱՐԵՎՈՐ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

դուրս են մնացել որոշում կայացնողների ուշադրությունից: Հետագայում կարող էք այս տեղեկատվությունը տարածել այլ շահագրգիռ կողմերի շրջանում, ինչպիսիք են՝ օրենսդիրները կամ լրատվամիջոցները:

Հաշվի առնելով օրենսդիր մարմնի՝ որպես քաղաքացու ներկայացուցչի դերը, այն հաճախ դիտվում է որպես բյուջետային գործընթացում ընդունվող որոշումների վրա ազդելու ամենահարմար կետը քաղաքացիական հասարակության համար: Տարածված է այն կարծիքը, որ օրենսդիր մարմինները չունեն բյուջետային փորձ ունեցող անձնակազմ և համապատասխան կարողություններ՝ գնահատել բյուջեի առաջարկները, ներկայացնել փոփոխությունների և լրացումների առաջարկություններ: Եթե, օրինակ, Ձեր բյուջետային աշխատանքը կենտրոնացնեք ոլորտային հանրային քաղաքականության և ծառայությունների որոշակի հատվածի վրա (օրինակ՝ առողջապահության ոլորտ կամ գյուղատնտեսական սուբսիդիաներ), ապա ակնկալվում է, որ Ձեր փորձը և բյուջեի մասին պատկերացումները ավելի մեծ կլինեն, քան քաղաքական ներկայացուցիչների փորձը, չնայած նրան, որ վերջիններս են այս ոլորտում որոշում կայացնողները: Դուք կարող եք օգտվել դրանից և քաղաքական գործիչներին (օրինակ՝ խորհրդարանական հանձնաժողովների անդամներին) պարբերաբար տրամադրել տեղեկագրեր, որոնք ներառում են Ձեր կողմից կատարած մոնիտորինգի արդյունքները, բյուջեի վերլուծության զեկույցները, կիսվել լավագույն փորձի վերաբերյալ խորհուրդներով և այլն: Դրա փոխարեն կարող եք ակնկալել, որ այս պաշտոնյաները ավելի տեղեկացված կլինեն Ձեր գործունեության մասին և Ձեր առաջարկները ի սկզբանե արդեն կունենան որոշակի վստահության աստիճան: Երբ հարգանքի արժանանաք Ձեր փորձառության համար, ավելի հավանական կլինի, որ քաղաքական գործիչները կցանկանան մասնակցել Ձեր կողմից կազմակերպվող հանրային բանավեճերին և այլ միջոցառումներին:

ԱՇԽԱՏԵ՛Ք
ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Մեկ այլ հիանալի խողովակ հանդիսանում են լրատվամիջոցները, որոնք կարող են անվճար հրապարակել Ձեր վերլուծություններն ու եզրակացությունները: Լրատվամիջոցների հետ կառուցողական հարաբերությունների հաստատումը մշտական ջանքեր է պահանջում: Անպայման նախապես տեղեկատվություն տրամադրեք նրանց և մշտապես թարմացրեք Ձեր աշխատանքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը: Բացի այդ, բյուջեի վերաբերյալ թեմաներով լրագրողների համար կազմակերպվող անվճար ուսուցումները կնպաստեն Ձեր մասին կարծիքի ձևավորմանը՝ որպես վստահելի կազմակերպություն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵՔ ԶԼՄ-
ՆԵՐԻՆ

Շատ երկրներում Աուդիտի Բարձրագույն Մարմինները և վերահսկող այլ մարմինները հազվադեպ են արժանանում հանրության կամ լրատվամիջոցների ուշադրությանը, թեև նրանց հաշվետվությունները և զեկույցները կարող են հետաքրքիր բացահայտումներ պարունակել: Այս հաշվետվությունները ոչ միայն տեղեկացնում են ծրագրերի և գերատեսչությունների պակասորդների կամ հավելուրդների մասին, այլև կարող են բացահայտել նաև կատարված խարդախություններն ու չարաշահումները, չթույլատրված կամ չհիմնավորված ծախսերը և ցույց տալ պետական գերատեսչությունների ֆինանսական կառավարման համակարգային թերությունները: Այս հաշվետվությունները կարող են հարուստ տեղեկատվություն տրամադրել բյուջեի կատարման հետ կապված խնդիրների գնահատմամբ հետաքրքրված ՔՀԿ-ներին: Աուդիտի հաշվետվությունները հաճախ կառավարության ֆինանսական առողջության վերաբերյալ տեղեկատվության միակ անկախ աղբյուրն են, սակայն, հաճախ, դրանք գրվում են տեխնիկական բյուրոկրատական ոճով, որը դժվար հասկանալի է լայն հանրության համար: Արդյունքների մատչելի և հասկանալի լեզվով ներկայացումը, և կարևորագույն կետերի հրապարակումը կարող են օգնել արդյունքները տարածել ավելի լայն լսարանում: Մեկ այլ միջոց է վերահսկող մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ հանրային առցանց կամ առկա միջոցառումների կազմակերպումը և դրանց արդյունքները հանրությանը ներկայացնելը:

**ԱՌԴԻՏԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ը ԹԱՐԳՄԱՆԵՔ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ՊԱՐԶ
ԵՎ ՀԱՄԿԱՆԱԼԻ
ԼԵԶՎՈՎ**